ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

«____» _____ 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ.Անանյան

ՍՑ-ԳԲԽ-49/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2015թ. թիվ 1/73-1/34285-15 գրությամբ ներկայացված «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03012667) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 16.11.2015թ. թիվ 1/73-1/34285-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին

(այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.11.2015թ. ԴՎԱ/2646 գրության պատճենը:

2. «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը ուսումնասիրելու վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 23.05.2016թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի տնօրենը պարզաբանեց, որ իրենք գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալ չեն ներկայացրել, իրենք տեղյակ չեն եղել, որ ընկերության՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը և հայտով էլ նման հայտարարություն չեն ներկայացրել, ուստի խնդրեց ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 29.06.2016թ. ժամը 17:00-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 06.11.2015թ. ԴՎԱ/2646 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ

ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգին հայտ ներկայացրած «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն ընթացակարգի 69, 70-72, և 74 չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից 26.10.2015թ. ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ:

27.10.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է Կարգի 48-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը, ըստ որի «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի պարտավորությունները գերազանցում են ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը, որի հիման վրա հանձնաժողովը որոշել է մերժել «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 29.06.2016թ. ժամը 17:00-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-49/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2015թ. թիվ 1/73-1/34285-15 գրությամբ ներկայացված «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 10.10.2015թ. հայտ է ներկայացրել «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հավելված 3.3-ով նախատեսված հայտարարությունը:

3. Ընթացակարգի հրավերին կից ներկայացված հայտ պատրաստելու հրահանգի հավելված 3.3-ի (ֆինանսական միջոցների մասին հայտարարություն) համաձայն՝ մասնակիցը պետք է ներկայացնի հայտարարություն այն մասին, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

4. Ընկերությունը հայտի թիվ 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

5. Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 26.10.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

6. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմում է՝ 237,661,997 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 157,477,620 ՀՀ դրամ:

7. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Գնահատող հանձնաժողով) կողմից 30.10.2015թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի հայտը՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցելու հիմնավորմամբ:

<u>5. ՍՑ-ԳԲԽ-49/16 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 16.11.2015թ. թիվ 1/73-1/34285-15 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 06.11.2015թ. ԴՎԱ/2646 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից 10.10.2015թ. ներկայացրած հայտը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Կենտրոնն, ուսումնասիրելով Հրավերը, արձանագրում է, որ Հրավերով մասնակցից պահանջվել ներկայացնել հավելված 3.3-ով նախատեսված հայտարարություն այն մասին, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Ընկերության կողմից 10.10.2015թ. ներկայացրած հայտի ուսումնասիրությունից երևում է, որ Ընկերության հայտում առկա չէ հայտարաություն այն մասին, որ Ընկերության՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընկերությունը հայտի թիվ 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է միայն, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված

պարտավորությունների պատշաճ կատարումը, ինչը և պահանջվել է Ընթացակարգի հրավերին կից ներկայացված հայտ պատրաստելու հրահանգի հավելված 3.3-ով (ֆինանսական միջոցների մասին հայտարարություն):

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն չի ներկայացրել հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը, ինչպիսի պայմաններում գնման գործընթացի շրջանակում չի ներկայացրել կեղծ տվյալ, ուստի գտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2015թ. թիվ 1/73-1/34285-15 գրությամբ ներկայացված «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03012667) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2015թ. թիվ 1/73-1/34285-15 գրությամբ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03012667) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել՝ Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Պետի տեղակալ՝	Հ. Այունց
Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝	Հ. Ենգոյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ	Մ. Կատվալյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-49/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Դավթյան